

Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկտոր,
պրոֆեսոր **Դերենիկ Ջրանտի Դումանյանի**
ողջույնը,

“The New Armenian Medical Journal”

պարբերականի հնգամյա հորեյանի առթիվ



Չարգելի գործընկերներ

Գոհունակությամբ նշում եմ, որ Երևանի Մխիթար Չերացու անվան պետական բժշկական համալսարանի հովանու ներքո հրատարակվող Նոր հայկական բժշկական հանդես պարբերականն արդեն 5-րդ տարին է, ինչ իր արժանի ներդրում ունի հայրենական և արտասահմանյան տեսական և կիրառական բժշկագիտության նվաճումների հրատարակման և մեկնաբանման գործում:

Իր գործունեության բավականին փոքր ժամանակահատվածում, խմբագրության աշխատակիցների ջանքերով, պարբերականը իր գործունեությունը ծավալել է ոչ միայն Հայաստանի Հանրապետության և Արցախի սահմաններում, այլ նաև մերձավոր և հեռավոր արտասահմանյան երկրներում, որի արդյունքում մեր պարբերականի էջերում իրենց արժանի տեղն են գտել նաև սփյուռքի բազմաթիվ բժշկագետների հոդվածներն ու աշխատությունները:

Լինելով անգլալեզու հրատարակություն՝ պարբերականը հայ բժիշկների ձեռքբերումները հասու է դարձնում բազմաթիվ երկրների ոչ հայալեզու ընթերցողներին, որի շնորհիվ պարբերականի ձեռք բերման համար խմբագրությանն են դիմում են մի շարք երկրների գրադարաններ:

Հպարտությամբ պետք է նշեմ, որ պարբերականի թղթակիցների շարքերում տեղ են գտել նաև օտարազգի՝ իտալիացի, անգլիացի, հունյ, ռուս, հնդիկ, իրանցի գիտնականների հոդվածներ: Հրապարակված աշխատությունների բնույթը վկայում է, որ Հայաստանի գիտնականները սերտ համագործագության մեջ են իրենց արտասահմանցի գործընկերների հետ, որի արդյունքում փորձի ու հմտության ձեռքբերումները հասանելի են դառնում երիտասարդ գիտնականներին:

Խմբագրության անբասիր աշխատանքի շնորհիվ Նոր հայկական բժշկական հանդեսը գնահատվել է ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից և հանդիսանում է թեկնածուական և դոկտորական ատենախոսների հետազոտությունների արդյունքները հրատարակող պարբերական:

Պարբերականը իր ուրույն գնահատականն է ստացել նաև ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատիզացման պրոբլեմների ինստիտուտի Գիտության տեղեկատվության վերլուծության և մոնիթորինգի կենտրոնի կողմից կատարված վիճակագրական տվյալներում: Այն իր արժանի տեղն է գտել հայկական պարբերականների ցանկի լավագույն տասնյակում:

Հանդեսը ունի առողջ նախադրյալներ հասու լինելու համաշխարհային այնպիսի ինդեքսավորող հաստատությունների և գրադարանների՝ ինչպիսիք են SCI, JRC, ISI, EMBASE, PubMed:

Շնորհավորելով Նոր հայկական բժշկական հանդեսի աշխատակազմին և բոլոր թղթակիցներին, որոնք իրենց լուրջն են ներդրել պարբերականի բեղուն և նպատակասլաց գործունեության մեջ՝ մաղթում եմ նրանց ավելի մեծ եռանդ և կամք՝ շարունակելու իրենց ստեղծագործ ու շնորհալի գործունեությունը: